ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 30.07.2019թ. ԹԻՎ 651-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 16 օգոստոսի 2019թ.,

(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Քալոյան ՇՇՇ բաժնի պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա.Կարախանյան ՆԾ ԱՆԿ ղեկավար

Գ.Մանուչարյան ՇՇՇ բաժնի առաջատար ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամ՝

Բ.Գևորգյան ՆԾ ՀՕԿ ղեկավար

Գ. Սարգսյան ՆԾ ԱՆԿ ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ԻՊԳ բաժնի մասնագետ

Օրակարգ՝

Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով Բետոնի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատման արդյունքների քննարկում

Հանձնաժողովի նախագահը նշեց, որ 13.08.209թ. <<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ կողմից ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, այն է՝ չի կատարվել <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին մասի, 7-րդ բաժնի 7.22 կետի կետը՝ <<.. *Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ,>>* սահմանված պահանջը:

Հանձնաժողովի նախագահը նշեց նաև, որ հանձնաժողովը հիմք ընդունելով <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին մասի, 7-րդ բաժնի 7.18 կետը պետք է ծանուցեր տեղ զբաղեցրած մասնակցին արձանագրված անհամապատասխանության մասին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել այն, սակայն հանձնաժողովի նիստից առաջ <<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին արդեն իսկ ուղարկվել են փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնք օրենքով սահմանված կարգով տրամադրվել են գնահատող հանձնաժողովին:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը, որի մասին ՀՀ ՊԵԿ-ից պատվիրատուին տեղեկատվություն չի տրամադրվել:

Հանձնաժողովի նախագահը նշեց, որ հանձնաժողովը հիմք ընդունելով <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին մասի, 7-րդ բաժնի 7.15 կետերով սահմանված պայմանները, այն է. <<... *սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող>>՝* <<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ ներկայացրած հայտարարությունները համարել է իրականությանը համապատասխանող:

Քննարկումների արդյունքում ***հանձնաժողովը միաձայն որոշեց.***

1. <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ -ին,
2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին օրենքով սահմանված կարգով տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Կից ներկայացվում են գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները:

Ա. Քալոյան	Հանձնաժողովի նախագահ
Ա.Կարախանյան	Հանձնաժողովի անդամ
Գ.Մանուչարյան	Հանձնաժողովի անդամ
Բ.Գևորգյան	Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան	Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան	Հանձնաժողովի քարտուղար